Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-359-22.08.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 154-րդ հոդվածի՝

1. վերնագրում «շինարարական աշխատանքներ իրականացնելը» բառերը փոխարինել «շինարարական աշխատանքներ, կամ առանց թույլտվու թյան քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը» բառերով,

2. 1-ին մասում «թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը» բառերը փոխարինել «թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ, կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝» բառերով,

3. 2-րդ մասում «Գյուղական բնակավայրերում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը՝» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 154[1] -րդ հոդվածի ՝

1. 1-ին մասում «Կառուցապատումը» բառը փոխարինել «Կառուցապատումը՝ կառուցումը, վերակառուցումը եւ(կամ) քանդումը» բառերով,

2. 1-ին եւ 2-րդ մասերում «նախահաշվային արժեքի» բառերը փոխարինել «նախահաշվային արժեքի (նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի կողմից սահմանված շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների համաձայն հաշվարկված ծախսերի)» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-359-22.08.2022-ՏՀ-011/1 *ՏԵՂԵԿԱՆՔ*
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 154-րդ հոդվածի՝

1. վերնագրում «շինարարական աշխատանքներ իրականացնելը» բառերը փոխարինել «շինարարական աշխատանքներ, կամ առանց թույլտվու թյան քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը» բառերով,

2. 1-ին մասում «թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը» բառերը փոխարինել «թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ, կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝» բառերով,

3. 2-րդ մասում «Գյուղական բնակավայրերում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը՝» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 154[1] -րդ հոդվածի ՝

1. 1-ին մասում «Կառուցապատումը» բառը փոխարինել «Կառուցապատումը՝ կառուցումը, վերակառուցումը եւ(կամ) քանդումը» բառերով,

2. 1-ին եւ 2-րդ մասերում «նախահաշվային արժեքի» բառերը փոխարինել «նախահաշվային արժեքի (նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ քաղաքաշինության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի կողմից սահմանված շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների համաձայն հաշվարկված ծախսերի)» բառերով÷

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ <<ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-359-22.08.2022-ՏՀ-011/1, Կ-359[1]-22.08.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում	Նախագծի 1-ին հոդվածի՝ «Կառուցապատողները պարտավոր են» բառերը առաջարկում ենք փոխարինել «4-րդ մասի» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված			
2.	ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր 2-րդ հոդվածով, հետևյալ բովանդակությամբ՝ հիմք ընդունելով Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսված պահանջը. «Հոդված 2. Օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել 27-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. 27) հաստատում է կառուցվող, հիմնանորոգվող, վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, ընդլայնվող, արդիականացվող, վերազինվող, նորոգվող, քանդվող կամ ապամոնտաժվող շենքերի, շինությունների , կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշները:»:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Վարչական	Առաջարկվում է օրենքների նախագծերում ավելացնել նոր հոդված.	Ընդունվել է:	Ընդունվել է:

		իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին և «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր:	«***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: »		